

ԲԱԺԱՆՈՐՊ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Մշակարար համար	
Տարեկան	10 Ֆր.
Վեցամսեայ	5 »
Արտասահմանի համար	
Տարեկան	12 »
Վեցամսեայ	6 »
Անկերթի համար	
Տարեկան	2.50 Տր.
Վեցամսեայ	1.25 »

ԳԱՆՈՒԿՆԻ ՎՃԱՐՆԵԼԻ
 Իմանուղոսի տղր ստաշին
 երեսին համար 40 սանթիմ
 է. իսկ վերջին երեսի հա-
 մար 20 սանթիմ է. երեքին
 սակի սեղաններու համար
 20 Օլո գեղջ կրնայ:

ՇԱՐՔՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

Նախակ եւ դրամ դրկեչ
 հմբագրութեան հասցիին
 —
 Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ չեմ տրուիր

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ОТГОВОРНИКЪ: Д-ръ Т. Хр. Стояновъ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Ա Ձ Դ

Կիրակի հոկտեմբեր 3ին հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարել տան Վառնայի եւ Նիւրնբերգի գաղանակականները, էրզրումի մէջ կախուած էրզրումցի Արամ Արամեանի (Թաթուլ) համար:

Կը յուսանք թէ նոյնը պիտի նաեւ միւս քաղաքներու երիտասարդութիւնը հայ անդուգական յեղափոխականներէն մէկուն յիշատակը յարգելու համար:

ՍՈՂՈՒՆՆԵՐՈՒՆ

Այս տողերուս մէջ կը ծափէինք Անմեղեան մը, ազատութեան համար կռուող իր ճշմարիտ ախոյեան մը. այս տողերուն մէջ վերստին կը փակցնենք անոր ճակատին վրայ մեր հրապարակային թուրն ու ամօթը իբր արգահատելի սողուն մը:

Ձինքը Պօլիս չեմ ճանչցած, մեծապէս բարեբախտ եմ որ ծանօթանալու առիթը չեմ ունեցեր այդ յեղեղուկ մարդուկին հետ:

Ինչո՞ւ զգացումներու այս յանկարծական փոփոխութիւնը. վասընչի «Լ'Առաժէնի» վերջին թիւին մէջ մեծ ցաւք կը կարգանք թէ՛ Անմեղեան, «Լ'Առաժէնի», «Մէլիթէթի», էվէնրմանի» աշխատակիցը, գիմումներ կընէ Ահմէտ Ճէլալեատին փաշային քով Պօլիս վերադառնալու մասին Սուլթանէն թոյլտուութիւն ստանալու համար. այս պատճառաւ՝ «Լ'Առաժէնի» յաւէտ կը փակէ իր սրնակները Անմեղեանի առջեւ:

Կակծեցուցիչ չէ՞ այս լուրը, ընթերցող. Երէկ հայկական դատին պաշտպանութեան համար՝ լեզուով, գրչով Անմեղեան կոխ կը մղէր արևն կղակ Մարգարէ դէմ, եւ ոտնակոխ իրաւունքի եւ շարժարուած արգարութեան ջատագով կը հանդիսանար քաջաբար. իսկ այսօր՝ կը զիջանի համբուրել այն ձեռքը, որ իր

բիւրուոր եղբայրակիցներուն մահուան վճիռը ստորագրած է եւ կերթայ Վոսփօրի գեղածիծաղ փանց վրայ իրաւունքը կոխատող եւ արգարութիւնը խաչող անսիրտ վոհմակին վրայ թիւ մըն ալ ինքն աւելցնել վատարար:

Աշխարհի վրայ ամէն բան իր հակառակն ունի, ճշմարտին դէմ կայ սուտը, գեղեցիկին դէմ սգեղը, բարիին դէմ չարը, քաջին դէմ վատը, Ձայս քաջ գիտենք, ուստի սոյն դունակ կսկծեցուցիչ լուրերուն առջեւ՝ տրամիլը թուլամորթներուն կը թողունք: Ինչպէս ծառն իր պտուղէն կը ճանչուի, մարդն ալ նոյնպէս իր գործերէն: Կը գուրգուրանք այն ծառին վրայ, որ գալար սաղարդներով եւ հիւթեղ պտուղներով ծածկուած է բոլորովին, բայց երբ միանգամ ընդմիջտ դադրի պտղաւէտութենէ եւ չորանայ, կը կտրենք զայն ու կրակը կը նետենք: Ահա ասիկա է նաեւ բուն վախճանը յեղեղուկ եւ սողուն Անմեղեանի մը եւ իր նմաններուն, որոնք կայրեն ինչ որ երէկ կը պաշտէին, եւ կը կոխտան անամօթարար այն սկզբունքներն ու համոզումներն, որոնց վրայ quasi կը գուրգուրային:

Գնա, պարոն, Պօլիս, բարի ճամբորդութիւն, եւ վայելէ հոն վերստին հարեմական գիրք ու փափուկ կեանքը: Մեզի համար բնաւ նշանակութիւն չունի քու վերադարձը:

Վերջին ցոյցը ելաւ նաեւ կատարեալ զտարան մը յեղափոխական գիմակին տակ ծածկուած զձուձ ու արգահատութեան արժանի սողուններուն, որոնք շատ լաւ որակած էր Վարդօն, կոչելով զանոնք հարեմական սնունդի վիժուկներ:

Քեզի եւ նմաններուդ պարտք կը համարիմ հրապարակային կարծ յորդոր մը տալ:

Երբ անհատ մը կը մտադրէ ու է գործի մը ձեռնամուխ ըլլալ, նամանաւանդ ազգի մը ապագան փրկելու սահմանուած

սուրբ ու նուիրական գործին, պարտի նախ խորհիլ, փորձել իր ոյժերը եւ խոհական շրջահայեցութեամբ տեսնել թէ՛ պիտի կարողանայ այդ գործին իրեն բաժին ինկած բեռը վերցնել իր ուսերուն վրայ, պիտի կարողանայ նաեւ հետեւել անսայթաք եւ անխոտոր այն ուղեգիծն, որուն վրայ կան զրկանք, տառապանք, նոթութիւն եւ մահ: Երբ իր մէջ կը գոյացնէ գիտակից համոզում մը տանելու համար այդ ծանրածանր եւ միանգամայն ըստ նուիրական բեռը, այն առեն թող ստանձնէ իրեն սահմանուած բաժինը. հակառակ պարագային՝ լաւ է որ միշտ սմբած մնայ իր պատեանին մէջ խղունջին նման:

Յիսուս կը դադրէր Յիսուս ըլլալէն, երբ իր ուսին վրայ բարձրացած խաչը Գողգոթա տանելու դեղեւէր:

Կիմանա՞ք սողուններ:

Ա.Ի.Օ

ԻՆՉ ԿԸՆԷ ՊՈՒԼԿԱՐԱՅԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԻՒՆԸ

Ամէն տեղ ուր գոյութիւն ունի զարգացած երիտասարդութիւն մը, հոն կը տեսնուի ազգային ամէն գործերու մէջ յառաջադիմութիւն եւ ոգեւորութիւն. երիտասարդն է որ կը գալարի պէտքը. նա է որ կը մտածէ ամէն լաւ միջոցները, այդ պէտքը լրացնելու համար: Այս ամէնը երիտասարդութեան պարտականութիւնն է. ամէն ոք զգալու է, զղուելու չէ, յուսահատելու չէ. պէտք չէ անսալ անոնց որք կուղեն իր առաջը պատուար կանգնել. մէկ խօսքով ամէն բան զոհելու է բարի նպատակի մը համար:

Ինչ կընէ Պուլկարահայ երիտասարդութիւնը, որուն գործելու միջոցները չեն պակսիր, որովհետեւ կը գտնուի ազատ երկրի մէջ. մեր աչքի առաջն է

Վառնան. բոլոր երիտասարդներուն վրայ ալ կը տեսնուի ամէն գործի հանգէպ սոսկալի անտարբերութիւն մը. բնաւ չեն մասնակցիր ազգային գործերու. ինչո՞ւս պէտք է. ինձի է մնացեալ ազգին գործերը ուղղել. հասաւնք են անոնց բերնին մէջ միշտ կրկնուած խօսքերը, երբ իրենց փոքր ինչ մասնակցութիւնը պէտք լինի ու է գործի համար. մինչդեռ իրենց «քէֆին» համար մեծ ժամանակամիջոցներ գտնելէ զատ իրենց ամսականին կէսն ալ ունայնօրէն ծախսելու չեն խնայեր:

Ռուսչուքի երիտասարդութիւնը որ անցեալ տարի կոկորդը պատուելու աստիճան կը պողար վարժարանի ուսուցիչներուն անբարոյական վարմունքը եւ իրենց պաշտօնին անյարմար անձնաւորութիւններ լինելնին ապացուցանելու համար, իրեն ի պէտք հասաւ. ուսուցիչները ամէնքն ալ հրաժարեցան. լաւ, հապահիմա ի՞նչ լինելու ելան ու միեւնոյն ուսուցիչները պաշտօնի կոչելէն ի վատ, ի բաց առեալ տնօրէնէն, անոնց մէջէն բառին բուն նշանակութեամբ մի քանի անփորձ պատանիներու ամբողջ վարժարանին տնօրէնութեան մեծ պատասխանատուութիւնը յանձնելու սկարամտութիւնը ունեցան: Մենք չենք ուզեր ըսել թէ անկիրթ են. հապա, վարժարանի մը տնօրէնութիւնը ստանձնող անձ մը պէտք է անպատճառ բոլորած լինի կանոնաւոր վարժարանի մը շրջանը, ու այդ պաշտօնին մէջ ըստ բաւականի փորձառութիւն ձեռք բերած:

Այս յիշուած իծաղելի դարձաւ, ու ապշեցուց ամէն անոնք, որք հետեւած էին անցեալ տարուան Ռուսչուքի վարժարանին համար լրագիրներու մէջ արուած տեղեկութիւններու ու յօդուածներուն:

Ուրեմն ո՞ւր է Ռուսչուքի երիտասարդութիւնը. ո՞ր ծակն է մտեր, որ կը վախնայ իր գլուխը դուրս հանել. ինչո՞ւ հիմա չի

բողոքեր: Ասկից ուրիշ բան չի հետեւիր, բայց եթէ հասկնալ թէ անցեալ տարուան իրենց ըզոքները անարգար են եղած, կամ թէ ոչ ճշմարիտ. դո՛նէ մենք այդպէս կրնանք եղբակացընել:

Է՛հ, եթէ մեր ամբողջ Պուրկարահայ երիտասարդները, թող Ռուսչուքը և Վառնան, շարունակեն իրենց այս ընթացքը, եթէ շարունակեն իրենց խոր քունը, մենք ուստի սպասենք օգնութիւն. աղաներէ՛ն. այդ արգէն մեր աչքի առաջն է ամէն տեղ:

Լաւ մտածեցէք պարոններ, ապագայի մտածանքները ձեր ձեռք մնալու համար, վասն զի մարդկութիւնը չի պահանջեր որ միմիայն սպրեւու համար ապրուստ հայթայթելը մտածենք մեզ համար, այլ օգտակար կարենանք ըլլալ նաեւ մեր նմաններուն:

Ամօ՛թ է, ամբողջ սուրկարահայ երիտասարդներուն, եթէ այսպէս շարունակէ:

ՄՈՒՐԱՏ-ՍՈՎՐԱՏ

ԺԵՏԻՆ ԿՍԿԻԾԸ

Մի ձանձրանաք, ընթերցողներ, խօսքս դարձեալ Արշակ Զօպանեան ըստածին վրայ է: Առաւօտէ մինչեւ երեկոյ տաճկական դեսպանատան պատերուն տակ

ԳԻՏԱԿԱՆ

ՄՏԻՆ ՈՒ ԺՍՊԱՆՈՒԹԻՒՆԵՐ ԵՐԿՐՈՒԱԿԱՆ ՎԱՐՁԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Պագիւստուրգի բժիշկներից Պ. Ա. Ս. Վերնենիւս Մոսկվայի բժշկական վերջին հոնդրէնում վերոգրեալ նիւթի մասին հետեւեալը խօսած է.

«Վերոգրեալ մեծագոյն մասնատուարութիւնը հակառակ պահանջան է Արգի սերունդի աշակերտների ֆիզիքական անուժը և անողջութիւնը գոնազուցել չեն ընտել, մեր դարի մեծագոյն նեարդայնութիւնը թերթից թերթի արտած լինելով: Գործչաներիս բարոյական բեժիմն. բացի թերեւս անգլիական գործչներից, էլ որոշվում է իրա ճնշող հանգամանքով: Վերջապէս, այնպիսի արուած դասերը ընդհանրապէս աշակերտներին մտաւոր ընդունակութիւններից և ոյժերից վեր են»:

«Արդ ուրեմն այս չորս պատճառները զիստօր գիտն են խաղում և լինաների ուղեղի ու ժամպատութեան ծագման մէջ:

«Մեր ժամանակի գործչների կողմակիրութիւնը. հին գործչների հետ բազմատուած արդարեւ անաշտ գիտութիւններ է արած, վարչութեան կողմից ձեռք առնուած անողջապահիկ խնամների անընդհատ անլացման շնորհիւ»:

«Եթէ արդի սերունդի աշակերտներին անողջութիւնը և ֆիզիքական

սլքոտացող այդ պարոնին վրայ յաճախ խօսելու պարտաւորուած ենք այն միակ պատճառով որ իր կեղծիքով լի և վարագորուած քարոզները եթէ կազմուած և հասուն մտքերու վրայ իրենց բացասական և հաստատական ազդեցութիւնը արգէն ըրած են, պիտի ներգործեն ապականութեան ժանրով մը նորահաս մարքերու վրայ ալ ինչ որ ամենէ անհարկուն է, մեզ համար ալ նկատելին: Թողուլ զինքը իր վրայ տարիացող ստահակներու հետ, յօժարակամ յանձն պիտի առնէի, եթէ ան, երբեմն չը յանդգնէր իր կրիայի պատենէն դուրս ելլել, ու, ապուէսի խորամանկութեամբ և կատուի մաւաւնով ճըշմարտութիւնները պարակելէ յետոյ, ալ ահեակ իր թոյնը ցատկեցնել: Հետեւէն գիտող աչքը միշտ իրական պատկերը իր գոյներով տեսնել կը շփոթէ. ճանչնալ մտէն Զօպանեան ու հետեւէն իր ճոճուտն և սնամեջ թղթի վրայի մրտաւըները կարգալ, այս երկու պարագաները միեւնոյնը չեն: Իր թերթով այնքան բազմակողմանի նիւթեր կը շօշափէ որ յաճախ միամիտ և խղճամիտ ընթերցողը սոյն նիւթերու վրայ ունեցած իր սգիտութեամբը, ենթակայ է շփոթութեան, ու՛ զանոնք չը կրնալով բարձրել, կը փորձուի կարծել թէ Պօլսոյ այդ իմաստակը գրական ու է զարգացում և ար-

նը քիչ գոհացուցիչ են, պէտք է համաձայնիլ, որ հին գործչների շատերի համար էլ նոյն բանն էր. ուրեմն այս սխալ արդիւնքները ժամանակաւ նոյնը պիտի լինէին, ինչ որ են այսօր. — այսուամենայնիւ միայն մեր դարումն է, որ մտաւոր ու ժամպատութիւնը խնդիր եղած է»:

«Գործչների բարոյական բեժիմը չը ցածանար բազմատու չին րէժիմի հետ, երբ գաւտադար և մարակը գաստիարակութեան անհրաժեշտ միջոցները էին նկատուում»:

«Վերոգրեալ երեք պատճառները, անոնց որեւէ տարակոյսի, կարող են աշակերտների օրգանիզմի ընդհանուր ակարացման վրայ ներգործել. նոյնչափ ևս իւրաքանչիւր սիսակմայի կամ մտանաւոր գործարանի էնէրգիայի նուազման վրայ հետեւաբար նեարդային սիսակման և մանաւանդ ուղեղը իբր մաս օրգանիզմի ուղղակի մասնակցում են մտաւոր գաստիարակութեան մէջ: Բայց այս ներգործութիւնները մտաւոր ու ժամպատութեան հանդէպ իբր ուղղակի պատճառներ չեն կարող մեղադրուիլ. նրանք անշուշտ երկրորդական, անուղղակի մի գեր են կատարում»:

«Մտում է չորրորդ պատճառը. այն է թէ արդի մտաւոր գաստիարակութիւնը, իրա թերութեան հետեւանքով, չէ համապատասխանում երեսաների ոչ ոյժերին, ոչ ընդունակութիւններին: Արդարեւ, ի հաստատութիւն այս հաստատական խօսքերին մի կողմից պայիս է սիրող մանկավարժական գրութեան արդի մարդաբան-կենսագրական օգնող-

ժանաւորութիւն ունի. որուն չեն ուշանար միանալ երբեմն երբեմն քաղաքական տեսութիւններու վիժումներ, միշտ հակասող, միշտ ազայամիտ ու ծիծաղելի: Բերիչներ այդ բանը ցոյց տուին. հոս, մանրամասնութեանց մտնել, այդ զէվզէկին շատ կարեւորութիւն տուած կըլլանք. միայն պիտի յիշեմ ձեզի կէտ մը որ անգամ մը եւս իր բարոյական ստորնութեան փայլուն փաստ պիտի ըլլայ: Ատիկա իր վերջերս Կ. Գալֆանէն «Կերած ձեռքին կսկիծին» հետեւանքն է:

Վերջին «Անահիտ» (թիւ 12) կը կարգանք ողբերգութեան ուսանող Կ. Գալֆայեանի վրայ գըրուած յօդուած մը, որ համեմուած է Զօպանեանի մը բերնին վայել հայհոյանքներովը: Գալֆայեան, Զօպանեանի համակրութեան չարժանացաւ (բան մը որ իրեն պարծանքն ըլլալու է) այն պատճառաւ որ զանի կը հարուածէր իբր խաբեբայ մը, կասկածելի մը, ուր որ խօսէր ու գրտնուէր, Մօտէն ծանօթ Զօպանեանի, ի Բարիզ, ան տեսաւ անոր բուն գոյնը, ապականած հոգին. ու հակառակ Զօպանեանի իրեն ցոյց տուած կեղծաւոր ժպիտներուն, Գալֆայեան իր վառ զգացումներու մէջ, որ անարատ «Հայրենասիրութեան» մը արտայայտութիւնը ունեցած են միշտ, չը կըցաւ տոկալ այդ Պօլսեցի շղթարար հացկատակին:

բայիսյոժիք) քննադատութիւնը, և միւս կողմից, աշակերտների անապահանջանքի հանգամանքը»:

«Արդի մանկավարժական գրութեան պահանջները, մարդաբան-կենսագրական անսակեղից հետեւալներն են. Ա. գաստիարակութեան մէջ ներդաշնակութեան բացակայութիւնն. Բ. մտաւոր շատ անանձնայատուկ զարգացում, գործադրուելով ի վնաս գաստիարակութեան ուրիշ մասերին. — այս գրեթէ ուղեղի զարգացման անանձնայատուկացում մի կրթութիւն է: Նեարդային արտակերտն սխալմայի արմատական կրթութեան մեծ անփութութիւն, այսինքն զգայարանքների և անգամների: Գ. երեսաների հոգեկան կեանքի կամաւոր և շարժուն գործողութիւնների մեկտայն անփութութիւնը. — նեարդային արտակերտն սխալմայի նման, — այսինքն նրանց նկարագրի: Դ. Գիտական ծանօթութիւնների ուսուցման մէջ կանոնաւոր աստիճանաւորութեան և խիստ կապակցութեան բացակայութիւն: Ե. Գրեթէ բոլորովին անհոգութիւն մակածական (հեթախիթի) (մասնաւորից ընդհանուր անցնիլ) և թանձրացեալ գիտութիւնների և քննակառակն գրեթէ միմիայն վերացեալ և արտածական (հեթախիթի) ընդհանուրից մասնաւորի անցնիլ) գիտութեանների վրայ հիմնուած մտաւոր կրթութիւն: Զ. երեսաների ոյժերից շատ վեր ուսումների ծրագիրներ բարձր ընդունակութիւնների վարդ: Եւ վերջապէս է. Ուսման ժամերի բաժանումը և քանակութիւնը, և կրկնումների ու քննու-

ու զայն խապառ հեռացնել վտւթայ իր շուրջէն, ու ամէն տեղէ ուր որ անոր ներկայութիւնը ապականութիւն յառաջ պիտի բերու: Զօպանեան այդ բանին չէր սպասեր, ու հետեւաբար Գալֆայեան պէտք էր սպասեր գոհհիկ վրէժխնդրութեան մը որով Զօպանեան իր գէմ պիտի զինուէր՝ գրելով «Խաչագող մը» խորագրով մի յօդուած: Գալֆայեան վերջերս ատոր պատասխանեց «այտակի հարուածներով», Զօպանեան իր վերջին «Անահիտ»-ին մէջ իր վրէժը լուծել վարձեր է վերբարտին իր «Կերած ձեռքին կսկիծին» ազդեցութեան տակ, ու գիտէ՛ք առանց զայդ (ձեռք) ակնարկելու, նորէն հայհոյութիւններովը համեմելով իր գրութիւնը:

— Սիրելի ընթերցող, Զօպանեան և իր վստակ վատեր են այնքան, որքան այդ բոռ կըբնայ լի իմաստ տալ, Խեղճ արարածներ՝, զի իրն է գրողի անանկան քննադատութեան ժանրը թափել քանի որ ձերն է «Անահիտ»-ին նման թերթը. ձեզ որակող աճականներով զձեզ ներկայացնել, ոչ մի հրապարակագիր կամ թերթ յանձն պիտի առնէր, որովհետեւ համեստներու փափկանկատութիւնը պիտի վերադարձրէր ու զանոնք պիտի շիկնեցնէր: Զինուիլ Գալֆայեանի գէմ, որ իրեն զէնք ունի իր տաղանդն ու բարոյականը, ատիկա անբարո-

թիւնների գրութիւնը պահանջելով մտաւոր ոյժերի շատ խիստ լարումը: «Գալով աշակերտների անապահանջանք արգանքների, մի կողմից նրանք յայտնվում են չորս պատի մէջ երկար նստուկ բանտարկութեան և ուղեղի խիստ երկարած ձգտումի հետեւանքով օրգանիզմում անաջ եկած աննդառուիեան խանգարումներով. խանգարումներ, որ աւելի մասնաւոր են «բարախորթիք» խանգարումներ կոչուած. խոմբին (Բուշարի սննդառութեան նուազումով հիւանդութիւններ): Միւս կողմից, երեսաների նեարդային սխալմայի մասերում զիստաբարբի երեւում են և որոշապէս նշանակում են այն սերտ կապերը, որ նրանց կապում են այնչափ քիչ բանաւոր այս մտաւոր և բարոյական գաստիարակութեան գրութեան հետ»:

«Գալով անողջապահութեան, մը մաշակութեան պակասի մասին բոլոր այս մանրամասնութիւնները, և վերոյգրեալ անապահանջանք արգանքները, որոշապէս յայտնում են զգործի աղետալի ազդեցութիւնը երեսաների ընդունակութեանց և ոյժերի վրայ. և հետեւաբար, նրանց ուղեղի և նեարդային գրութեան վրայ. — բացայայտ է ուրեմն, որ երեսաների մարք ու ժամպատութեան պատասխանատուութիւնը ամբողջովին գպրոցին է պատկանում»:

Դոկտ. Կ. փաշայեան

(Շարունակելի)

յականութեան լրումն է : Կը հաս-
կընամք քննադատութիւնը, կը
հասկնամ անաչառ յայտարարու-
թիւնը՝ բայց ոչ հայհոյանքը :
Զօպանեան երկու ծայրայեղու-
թեան մէջ է : Կամ «կը հայհոյէ»
կամ «կատուածացնէ» :

Եղբարեան երգիչը, որ ոչ
իր աղջիկն է ոչ ալ անձին վրայ
գաղափար ունի, այսօր իր թեր-
թին հերոսը դարձեր է, խպըլիկ
Մանուէլեան մը իր մտքին ու
արմատներին կուռքը—ու գիտէ՞ք
ովքեր են դոքա՞ այնպիսիներ
որ հայ անունը արհամարհանօք
կարասանեն : —Մօտէն ճանչ-
նալ Զօպանեան և իր վոհմակը ու
զայն հեռուէն լսել միեւնոյն բա-
ները չեն, որովհետեւ անոնք
ճշմարտութիւնները խոստովանե-
լու քաջութիւնը չունին : Բան մը
որ կերելի «Անահիտ»ի վերջին
թիւին մէջ : —Զօպանեան վո-
խանակ «Հ. Երեմիանի բարոյա-
կանը» վերնագրով սկսելու իր
Գալիթայան անուանարկով (!!)
յօդուածը, սկսելու էր «կերած
ձեռք» կսկիծը» տիտղոսով :
Բո՞ւ՞ք . . . այդ խոստովանութիւ-
նը մեծ արժանիք մը պիտի տար
Զօպանեանի մը :

— Բարիզի մէջ Զօպանեան
տիտղոսաւոր մուրացկան մըն է :
«Անահիտ»ի համարը ձեռքը կը
ներկայանայ հոն պատահամբ
այցելող հարուստին Մանթաշո-
ֆին, Եսայեանին, ձգնաւորեա-
նին . . . եանին եւայլն :

— «Համալսարան» հանդէսին
փաս մը հասցնելու գիտումով
ուսանողաց Միութեան շրջաբե-
րական գրել կուտայ ու իր թեր-
թին կողքին վրայ իբր «ուէրլամ»
կը տպէ :

— Գալիթայեանի օգնող հա-
րուսաներուն նպատակները ստա-
նալու համար այդ երկուսարդը
կանուանարկէ :

— Նուպար փաշայէն յետոյ
անոր տիկինին գթութիւնը իր
վրայ հրաւիրելու համար, գի-
ւանագէտ փաշան իր աստուածն
ու կուռքը կը դարձնէ :

— Աւայ ամէնէն յետոյ Սուլ-
թանի կենաց բաժակ կը պար-
պէտեւորէր Մուրատ մը ըլլալու
յոյսով : ու սակայն առանց իր
«սուրբ փէշերը» այրելու, հայ
յեղափոխական (՞) մը երեւ-
նալու :

Զօպանեան «համբակ» և ան-
մարուր «չահամոլ» մը : անաւա-
սիկ ինքն ու իր «Անահիտ»ը
մօտէն ճանչողին կաղմած գա-

(*) Մինչև այժմ մեզ համար չը
պարզեց թէ արդեօք ճիշդ է, որ Պ.
Գալիթայեան իրան ներկայացրել էր
իբր արդէն յայտնի գերասան ու
թաւրոնի տէրն : Եթէ այդ իրողու-
թիւնը ճիշդ է, ամէն ոք իրաւունք
ունէր մատնանիչ անել այդ պակա-
սութիւնը :

Յետոյ, Պ. Եղեազարեանը կարող
էր հայրենասէր չը լինել, բայց
աւելորդ լինել :

ղափարը : Հայ լրագրութիւնը կը
նողկայ իրմէն, ու ան չուզեր
զգալ : — «Որ ոչ լուիցէ ունկամք»
լուիցէ թիկամք» : զայդ ալ Պ. Կ.
Գալիթայեան ի գործ դրաւ իր
անձին վրայ ու ան «անզգամ»
մնաց, կը մնայ ու, ես համո-
զուած եմ, որ, պիտի մնայ :

ՎԱՀԱԳԻ,
Բարիզ, 3 հոկտ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուեսթ-Հոյօֆըն, 16 Սեպտ.

Անցեալ կիրակի 10 Սեպտ. տեղ-
ւոյս աղգային աշատ լսարանի Բ.
շրջանը վերսկսաւ : սրահը 70ի
մօտ երկուսեւ հետաքրքիր բազ-
մութիւն լեցուած էր : Ժողովին
կատեմապետէր Տ. Պ. Գալիթայեան
եւ, նախանտեանցի «Ազատն
Աստուած» երգովը բացաւ ժո-
ղովը : Եթէ Ա. շրջանի մի քանի
ժողովներուն ներկայ գտնուած
չըլլայի, համարումս բոլորովին
աւրուած պիտի ըլլար երգիչ
խումբին նկատմամբ : կերելի
անգրանիկ ժողովն ըլլալուն ուչ
մնացեր էին իրենց խրչափողը
այնքան լաւ մարքելէ : Ի՞նչ քաջ
գիտեմ այն ճիւղին մէջ բաւական
եռանդուն և միահաղոյն սրբող-
ներէն էին :

Պ. Տ. Գաղաղեան գրաւոր ճառ
մը կարդաց, նիւթն էր «Հայաս-
տանի ապագայի բարեւու-
թիւնը» ճառախօսը որ հաղիւ 18
տարեկան կար՝ իր խնամքով
պատրաստած ճառին մէջ յիշե-
ցուց թէ՛ «Մենք պէտք է մեր-
կանանք անտարբերութեան շա-
պիկէն, եթէ կը ցանկանք մեր և
Հայաստանի ապագայի բարեւա-
ւութիւնը . . . պէտք է ազգային
գործերով զբաղինք, եռանդուն
և անկեղծ գործենք» ճառը վեր-
ջացուց երկուսարդութեան ար-
ժանիքը գնահատելով :

Ժողովին ներկայ էր նաեւ Տ. Յ.
Սարկաւազեան, որն իտալացի աղ-
ջկան երգը «Մեր հայրենիք թըշ-
ուառ անտէր» երգեց դաշնակա-
հարութեամբ մէկտեղ : Այդ ինք-
նին յուզիչ երգի վերջը Օր. Մարի
Մըսըրլեանի արտասանութեան
զկիւղը բերաւ՝ «Հայրենիք թըշ-
ուառ երկիր» : օրիորդը իր մե-
լամաղձոտ ձայնով այնքան անուշ
և բառաւ բառ արտասանեց որ
երկար և բուռն ծափահարու-
թեան արժանացաւ, անընդհատ
ծափահարութիւնները ստիպե-
ցին օրիորդը երկրորդ մը ար-
տասանելու : այս անգամ ալ Տա-
րօնցու սրտաբուլի գրուած կտոր-
ուանքներէն, Սասունցի այրի
կնկան երգը վերնագրով «Անարգ
կենաց խոստովանելով չենք ուրա-
նար մեր հաւատ» արտասանեց և
իւրաքանչիւր յորդորակը «մեր-
թէ՛, մորթէ՛ անգութ տաճիկ» . . .
ըսելուն ամէն սիրտ կը մորմոքեր
յուզման որոշ նշաններ արտա-
յայտելով : Ժողովուրդը կրկնակի

ծափահարութիւններով իր շնոր-
հակալութիւնը յայտնեց օրիորդի
գեղեցիկ արտասանութիւններուն :

Օրուան ատենախօսան էր Տ. Թ.
Զարչաւճեան : նիւթն էր «մեր
ներկայ վիճակը» ի միջի այլոց
խօսեցաւ նաեւ յեղափոխութեան
վրայ, բացատրելով անոր օգին :
Տ. Ա. տենախօսը այլ և այլ աղղաց
պատմութիւններու ամենագլխա-
ւոր մասերը խիստ և կարճ կեր-
պով նկարագրեց, ինչպէս նաեւ
հայրցս, յիշեցուց Հայկի և Բէլի
պատերազմի շարժառիթը, ժողո-
վուրդը ոգևորուած ամէնքն ալ
հասկցան որ հայոց յեղափոխու-
թիւնը նոր բան մը չէ, հապա՞
մեր նախահայրերէն մնացած և
իսկ բնութիւնը ստեղծած է այն :
Յիշեալը քրքրեց պատմութիւն-
ները և բնաւ տեղ մը չի հանդի-
պեցաւ որ և է յեղափոխական մը
ետ կենար իր գործէն ըսելով
«զըջայի» :

Վա՞յ կարդաց այնպիսիներուն
որոնք ներկայ պատմութիւննե-
րուն մէջ էլ մը պիտի սեւցու-
նեն . . . Տ. Զարչաւճեան շեշ-
տեց ըսելով «լուութեան ժամա-
նակը չէ՛ այլ գործելու» . . . :
Խօսեցաւ նաեւ դպրոցի մասին,
մեր պղտիկները օտարանալէ
փրկելու համար յորդորեց որ
պէտք եղած միջոցները շուտով
ձեռնարկեն :

Ամենէ վերջը նոր վարչութեան
ընտրութիւնը սկսաւ գաղտնի
քուէով : Ընտրութիւնը կանոնա-
ւոր եղաւ և որոշուեցան հետեւ-
եաները :

- Տ. Յ. Պոյաճեան
- Պ. Ալիփուճարեան
- Պ. Գալիթայեան
- Դ. Երիմանեան
- Ի. Զանգալեան

Ենտրահարութիւնը ի սրտէ յաջո-
ղութիւն կը յայտարարուի : Նորընտիր
վարչութեան : Ժողովը գոցուեցաւ
ժամը չորսու կէսին : ամէնքը ու-
րախտարմազութեան տակ մեկ-
նեցան :

Ծիլ Ռոջուճի

Յ. Գ. — Յաւալին այն է որ
«Զայն Հայրենեաց» ի բրորդ
թուոյն մէջ «Սլաք» ստորագրու-
թիւնով Ուէսթ Հոյօֆընէ ուղղեալ
նամակ մը կարդացի, ուր նա-
մակագիրը խպնած էր ատենա-
խօսի անունը յիշելէ : Մի՞թէ
ճշմարիտ խօսողի մը անունը գրել
իրեն անպատուութիւն սեպած
էր : Թէ կարճատեւ զայն ճանչ-
նալու և խլութիւնն էր պատ-
ճառը անոր նիւթը չիմանալուն :
Լաւ պիտի ըլլայ ուրիշ անգամ
աչքերը սրբած և ականջները
բաց ժողովի ներկայ գտնուի,
որով ամէն ինչ ճշդութեամբը
ըմբռնած պիտի ըլլայ :

նոյն

—) (—

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

«Իրաւունք» տեղական լրագ-
րոյդ 67 թիւին մէջ Ա. Ե. ստու-
րագրութեամբ թշնամական ու
զրպարտիչ գրուածն ցաւ ի սիրտ
կարդացինք, նոյնպէս տեղոյդ
ուրիշ թերթի օգոստոս 21, 28 և
սեպտ. «Կէլ գանթարա . . .»
բաժնին մէջ անստորագիր թշնա-
մանքն :

Առաջին Պ. Ա. Ե. «տեղոյս
դպրոցական գործերը անորոշ
վիճակ մը ունին. երկու ամսէ
ի վեր քննութիւնները վերջա-
ցած են և անկէ ի վեր վարժա-
րանի վրայ խորհող իսկ չկայ,
եկեղեցին ու դպրոցը աղգայնոց
նուէրներէն զատ գրեթէ չունի
ուրիշ եկամուտ մը . . .» կը հար-
ցնենք իրեն թէ՞ ո՞ր պուլկա-
րաբնակ քաղաքներն երկու ամ-
սէ պակաս արձակուրդ կընեն,
միթէ վարժարանաց փակումն ու
բացումը տեղական կառավարու-
թեան ազգարարութեամբ չեն.
բոլորովին սխալ է թէ եկեղեցի
ու դպրոց աղգային նուիրատու-
ութեամբ կը կառավարուին. ե-
կեղեցին ունի իրեն սեփական
անշարժ կալուածներ, որոյ եկա-
մուտներովն ինքն մատակարար-
ուելէն վերջը, համեստ գումար
մըն ալ վարժարանի կը նպաստէ,
և հետեւապէս վարժարանի ան-
շարժ կալուածոց եկամուտի գու-
մարին միացնելով աղգային ինք-
նարուխ նուէրներն իր տարեկան
հաշուեկշիռը հաւասարութեան
մէջ կը պահէ :

Երկրորդ. «Երկար ատենէ ի
վեր թէ հոգաբարձութիւնը և
թէ թաղ. խորհուրդը, ոչ նիստ
ըրած ունին և ոչ ժողովուրդէն
գրաւ հաւաքած» : կը հարցնենք
իրեն : Թաղական կամ հոգաբար-
ձութիւն. միթէ հանապաղ նիստ
ընելու հարկադրուած է քանի
որ չունի առ ձեռն լուծելի խըն-
դիրներ. և թէ ինչո՞ւ համար
է «ժողովուրդէն գրաւ» հաւա-
քող» չի կայ գրել, աւելի ճիշդ
չէ՞ր ըսել—որ ես տասը Քրանք
ինքնայօժար աղգային տուրք
գրուեցայ, քանիցս ուղեցին ինչ
ինչ առարկութիւններով չի
վճարեցի. ինչո՞ւ կը կակաղէ
ճշմարտութիւնն գրելու : Ի մէջ
այլոց կը յաւելու թէ «նոր հո-
գաբարձու ընտրութեան համար
կառավարութենէն պաշտօնական
հրաւեր ըստացած և չեն պա-
տասխանած ու յայտնի դժգոհու-
թեան առիթ տուած են . . .» Ա-
հա Պ. յօդուածագրի յայտնի
դժգոհութեան առիթն որ հրա-
պարակաւ կը գանդատի, միայն
առանց խնդիրին պատճառն ու
շարժառիթն լուսաբանելու : Օ-
գոստոս ամսոյ մէջ քաղաքի աղ-
գայիններէն մեծագոյն մասը
ինչպէս նաեւ թաղ. խորհրդոյ և
հոգաբարձութեան անգամբ (բա-
ցի երեքէ) շրջակայ շերմուկնե-

ըր (պանեօ) գայած էին. ութ օրուան համար եւս անգլոսոս հագեւոր հովիւ Քեր. հայր սուրբը ու երաժիշտ դասատուն. այս բացակայութեանց մէջ օգոստոս 3ին կառավարութեանց պաշտօնական ընտրողագիր եկած էր. մեր Պ. Ա. Շ. իր խորհրդատու բարեկամին, Յակոբ Փօփազեանի շարամիա խորհրդէն մղեալ առիթէն կուզեն օգտուիլ. մաս մը ժողովրդեան սիրտը կը սիրաշահեն և իրենք զիրենք հոգաբարձութեան արժանաւոր ընտրելիներ կը ներկայացնեն. նատքիչ էր մնացած որ իրենց ծրագիրն յաջողէին. եթէ երեք թաղական խորհրդոյ անդամք եւս իրաց հանդէպ չէզոք չի գտնուէին, այսինքն ժողովրդեան ոչ մի պաշտօնական ծանուցում չըլին. այսպէսով իրենց ծրագիրն չուրն ինչպէս. նա մանաւանդ աւելի զայրոյթ զգացին երբ անսան թէ կառավարութեան պաշտօնակէս նախորդ հոգաբարձութիւնը վերահաստատեց մինչ ցնոր ընտրութիւն: Արդ՝ երբ այս անյաշող վիճակին բազմեցան՝ յանկարծ մին շառագունեալ տեղւոյք թերթի մը մէջ անստորագիր վարժարանի տնօրինութեան դէմ երաժիշտ դասախօսին ու Քերպատիւ Ս. հօր նկատմամբ անվայել ու անպատշաճ թշնամական զրպարտութեամբ նախադրեալ եղած է և ապա Պ. Ա. Շ. «Իրաւունք»-ի մէջ նոյն սրտով ու հոգով, որոյ պատճառն էր անաշին, իրենց հոգաբարձու շքանքութիւնը և երկրորդ մարտական կուսակցութեան անյաջողութեան մատնուիլը, որն ոգի ի բուն նախ «Մարտ»-ի ապա «Նոր կեանք» թերթեր բերելով նոր մարտական կուսակցութիւն մը ստեղծելու կը տենչային, բայց մեզ հետ մէկտեղ պաշտօնեայք ալ ամէն կերպով ջանացինք քաղաքիս ազգայնոց մէջ նոր կուսակցական սերմերու հանդէպ դիմագիր լինել, որով հարկագրութեան «Մարտ»-էն եկած տոմսերը ամօթապարտ յետս ճամբել:

Արդ՝ մենք վերջապէս գոհ ենք մեր Քեր. հայր սուրբի պաշտօնավարութենէ որ կատարելապէս պաշտօնի դիտակ ու հեղութեան տիպար մըն է, նոյնպէս գոհ ենք տեղւոյս ուսուցչական խմբէն որոնք կարելի եղածին շափ դպրոցի ընթացքը բարձր գիրքի մէջ պահելով հանդերձ, կուսակցական խում հակառակութեանց հանդէպ ալ խորհրդոյս յարած ու համբարալիս գործունէութեանց տիպար մը եղած են շուրջ երեք տարիներէ ի վեր:

Ի դիմաց թաղական խորհրդոյ Ասենապիւր Ասենապիւր Թ. Միրնանեան Պ. Յարութեանեան Թաթար Բաղարճըզ, 23 սեպտ.

ՊԱՐՈՆ ՊԱՏՈՒԵԼԻ ԴԱՍԱՏՈՒԻՆ

«Իրաւունք»-ի Պ. Գրատուին երկտողը կարգաւ պատիւ ունեցանք. և հարկ ենք համարում մի քանի խօսք ուղղել նրան:

Պարոնք ասում է թէ ես ազգային վարժարանի մէջ պաշտօն մը ձեռք անցնել եմ փափաքեր. մինչդեռ հոգաբարձութեան անդամներին ոչ ոք կրնայ ապացուցանել թէ ես դիմած եմ իրան պաշտօնակէս, ինչ որ հարկաւոր էր. եթէ երբէք դիմել եմ, այն էլ իբր հայ անհատ մը. հոգաբարձութեան անդամներին Պ. Ա. Մուրատեանին և տնօրէն Պ. Պօնտոգեանին, եթէ օգնականի պէտք մը անհուներ. ընդունելու համար իբր այցելու օրական երկու կամ երեք ժամ տարրական կարգերի համար բուլղարերէնի և ուրիշ մանր ուսումները դասախօսութիւններ անխառն. և ոչ թէ ձեռ նման ինքզինքնիս այսինչ կամ այնինչ ուսմունքի մասնագէտ ձեռագրելով:

Գայով իմ կարողութեանս կամ անկարողութեանս, այդ ամբողջ վառնացին կարող է դասել. որովհետեւ վառնայի մէջ Ֆիլիսոսք չճանչցող մէկը չկայ. մինչդեռ ո՞վ գրեւէ ձեր ինչ մարդ լինելը. այդ կէտը ամէնուս համար էլ մտնէ:

Պ. Պատուի Գրատու, ես ձեռ նման խումբ մը անհարակ անձեր ձեռ յարմար խմբագիրներէ ու հրատարակագիրներէ բաղկացած, մէջտեղ չեմ գցել պաշտօն ստանալու համար. որովհետեւ ես նախապէս եւ ոչ մէկու պէտքը ունիմ. ձեռ նման պաշտօն մտաբացողներէ չեմ, եւ շատ լաւ հասկանում եմ որ սրժանիք ունեցող մարդիկը ընդհանրապէս դիմումներով չեն զրպար. այլ սպասում են մինչեւ որ իրանց արժանիքը գնահատուի:

Արդ՝ օք պայտասում էին վառնայի մէջ ձեռ նման՝ եւ կարող ենք շեշտել ձեռն լատագոյն վարժարաններ. ինչ պատճառով չի դիմեցին. որովհետեւ ամէն ամէն օք ձեռ նման չի կրնար լինել:

Ինչք որ՝ անձամբ արդէն ձեր արժանիքին վրայ կասկածում էք:

Իսկ գալով թէ ձեռ ժամանակաւոր թէ մնայուն են ընտրել, այդ արդէն մենք ստոյգ աղբիւրներէ գիտենք. պայմանը գոյութիւն ունի, մեզ համար կարեւորութիւն չունի թէ՛ ո՞վ է սկզբում առաջաբերողը:

Պ. Պատուի Գրատու բնաւ մի կարծէք թէ այդ ձեր անհարակ պաշտօնակցական յօդուածներով կարող լինէք ժողովրդին աչքերը ներկել. հօ, հօ, խաբող չի կայ. արդէն ձեր որ կարողութեան, ինչ մանկավարժութեան տէր լինելը հասկացաւ ժողովուրդը. ձեռ համար այսօրուանէ աշակերտները կողմից եղած դիտողութիւնները հրատարակել չպիտի ուշանանք. այս պէտք է լաւ ըմբռնէք:

Ինչո՞ւ համար չէք բարեհաճիր ձեր բուն իսկ անուամբ հրատարակ գալ, որպէս զի մենք էլ ըստ այնմ վարվինք. դատաստ մը... ու՞ք... արդեօք այդ պաշտօնին արժանիքը ունեցող մէկին է այդ վարագործ արժանը... կը կասկածիք...:

Ես Պ. վարդօին չորս տարիէ ի վեր կը ճանչնամ. միշտ իր բարեկամը եղած եմ. այդ գիտեն թէ տեղւոյս երիտասարդները եւ թէ ընտանիքներ:

Իսկ գալով փոքրաւոր լինելու. այդ ինձի յարմար չէ. որովհետեւ հարեմի կեանքից փոքրութենէս ազատ եմ, եւ մտաբացկան, ստուկ մանկաւակ գաստարակութենէ զերծ:

Ֆէրի-Ս

ՄԵՐ ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐԻՆ

Հը՛... վերջապէս Պ. Սուին այս անգամ առանց դիմակի է. Արտակարգ քաջութիւն. վայել ամէն մի պատուախնդիր և ապետական բնաւորութիւն ունեցող անհատի...:

Մեր կարծիքի համար վաստ է ուզում «պարոն» շատ լաւ. լսեցէք. ընթերցողներ ահաւասիկ փաստերը:

Պ. վահան Մաղմանեանին «թքով» միտոն հասցրած ապտակները Սուինին—հրատարակի վրա. թէ ինչո՞ւ համար, այդպէտք է հարցնել ապտակված պարոնին:

Պ. Հայկունու երկու անգամ Սուինի վրա յարձակվելը անգլիական «բար» բառտոնով մէկ Աճէմի սրճարանի դիմաց, մէկ էլ քաղաքական պարտէզում. թէ ինչու համար, նոյնպէս պէտք է Պ. Սուինին հարցնել:

Հացագործ Գալուստին զգեստ կաշառք խոտտանալը, որպէս զի այդ պարզ մարդը հրատարակի վրա Սուինի ուսուցիչ լինելու համար հակառակ չը խօսի և հասարակութեան մտքերը չը պղտորէ...:

Պաշտօն ստանալու նախընթաց օրերում մեզ մօտ մարդ ուղարկելը, բարեկամանալու համար, խոտտանալով մեզ կուսակցական ինչ ինչ գաղտնիքները տալու և Պ. Շահրիմանի վատ մարդ լինելը հաստատելու:

Այս փաստերը կարծեմ բաւական են մի գաստուրի վարկը ամբողջովին գցելու և ոեւէ ուսումնարանի մէջ չընդունելու համար: Գոնէ այդպէս է Պուլկարաւան օրէնքը:

Սրանք լաւ են չեն. այլ հաստատ տեսված փաստեր. իսկ եթէ լաւ են լինի կարեւորութիւն տանք և պատմենք, այն ժամանակ... օհօ...:

ԽՈՒՔ.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

«Թան»-ի սեպտ. 19ին Պուլսէն կը հեռագրեն թէ մասնաւոր աղբիւրներէ կիմացուի որ խոտուութիւններ տեղի ունեցրել են Սվազի, վանայ և Մուշի վիլայէթներուն մէջ, իբր թէ Սվազի նահանգապետը վիրաւորուած է և բաւականաչափ հայեր կոտորուած են:

— Ելլալով մէջ հաստատուած յանձնաժողովը որ պիտի քննէր հայոց պահանջները, հեռագրով դիմած է բոլոր տարիական նահանգներու վարիներուն տոտալարկելով ներկայացնել բոլոր հայ քաղաքական յանցաւորներ:

ուր ցանկը, որոնք արժանի են ներման. նոյնպէս խոտուութիւններու միջոցին աւերուած եկեղեցիներու, վանքերու, դպրոցներու և որբանոցներու յանձնաժողովը իր առաջարկութիւնները պիտի ընէ բանաւոր մէջ գըտնուած հայերու և թուած հիմնարկութիւններու վերանորոգման մասին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵ

Պուլկարիոյ Պուլսոյ գործակատար Պ. Կէչօֆ, թուրք կառավարութեան առաջարկեր է խառն յանձնաժողով մը կազմել Մակեդոնական սահմանադրութիւնը հակալու համար օրէնքներ կազմելու ապագային աւաղակային խումբերու յարձակումներուն անջնջ առնելու համար, թիւրք և Պուլկար հոյին վրայ:

— Թրանսպալի նախագահը Քրիւկէր շատ կտորուկ կերպով առաջարկած է Անգլիոյ գործակատարին:

«Եթէ 48 ժամուան մէջ չը հրամայուի որ Թրանսպալի արեւելեան և արեւմտեան սահմաններուն քով հաւաքուած Անգլիայի զօրքերը հեռանան, այդ պիտի նկատուի իբր թշնամանք»:

— Թրանսպալի մէջ 16—60 տարեկանը կերթան սահմանադրութիւն: Երեսպիսաններ, պատարներ, փաստաբաններ, նախագահ Քրիւկէրի տղաքը և թուները նոյնպէս գացեր են:

Հայրերը և զաւակները կողք կողքի պիտի կուտին. կիները այրերուն ըստ են—աւելի լաւ է մեռնիլ քան թէ նահանջել:

— Ռուսիոյ 1900 թիւի ծովային զօրքերուն ծախքը 225 միլիոն ֆրանքի պիտի հոտնի ըստ մասնագիտական լրագիրներուն:

Կը հաղորդեն թէ Ռուսական լեհացիները կարեւոր գոհացում մը պիտի ստանան: Լեհական լեզուն որ մինչեւ օրս ջնջուած էր ուսումնարաններէն պիտի վերահաստատուի. վարսովիպի համալսարանին մէջ պիտի անցնին լեհական պատմութիւնը և գրագիտութիւնը:

Յ. ՃԱՆԿԻԻԼԵԱՆ

ՆՈՐ ԲԱՑՈՒՄ:

ԾՆԱԿԱՃԱՌԱՆՈՑ

Թիւ 389 Իսկիյի-պաշի

Կը վաճառուի ծխախոտ, բոսթալի և աղբրագրի ամէն տեսակ բուլբր նաեւ «Շարժում»ը:

ԸՆԴԱՐՁԱԿ ԵՐԿԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՍ ՀԱՒԱԿԱՐՈՑ

Հին և նոր Աղզ. երգերու գին 2 ֆր. սոյն երգարանը կը ծախուի վառնա. Ա. Չարպանեանի գրատունը նաեւ կը գտնուի ամէն տեսակ զարդանկար և վիպական գրքեր. դրամի փոխարէն կընդունի նաեւ նամակագրոյ՞մ. Գնում եւ վաճառում ամէն տեսակ գործածուած նամակագրոյ՞մ. հրոյ՞:

ՊԵՇԱՎԱԿԱ «ՎԶԱԻՄՈՒՄ» ԵՐՎԱՆ